



55. ԲԱԼԱԳՅՈՋԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով հրկու հարևան են հըլնում: Էկավ, որ հրկուսի կնիկն էլ ծանդրոտ դարձան: Էս մարդիկ լավ հարևաններ ին, որոշեցին, որ մեկի կնիկը տղա բերա, մեկի կնիկը աղջիկ բերա, նշանեն, ամուսնացնեն: Որ համաձայնվան, բեչքյարթմա արին, կերան-խման, Աստծուն հազար բերան փարք տվին: Հարևանությունը դարձրին բարեկամություն: Էկավ ժամանակը, մեկի կնիկը տղա բերեց: Անունը դրին Բալագյոզ: 3-4 ամիս հետո մեկէլի կնիկն աղջիկ բերեց: Անունը դրին Ալագյոզ: Ալագյոզն ու Բալագյոզը որ դարձան իրեք տարեկան, սաղ օրն իրար հետ ին խաղում: Հաց ուտելն էլ ին մոռանում: Որ մեկի մերը պատահում էր, տանում էր հրկուսին էլ մե քասի մեջ ճաշ էր լցում, ուտում ին:

Էս էրեխեքը որ մեծացան, բերին ըստոնցը պսակին: Ալագյոզը հետո մե քուր էլ ունեցավ, հըմա Բալագյոզի հերն ու մերը մեռան, արևը տվին ձեզի:

Էլ Ալագյոզն ու Բալագյոզը իրար շատ ին սիրում: Տենողն ասում էր՝ էրնեկ ձեզի: Իրեք տարվա մեջ Ալագյոզն հրկու էրեխա բերեց, մեկը՝ տղա, մեկը՝ աղջիկ: Մեծը տղեն էր:

Կնիկը ազիզ թիբեն մարթին էր ուտացնում: Էրեխեքին էլ էս կնիկը շատ անգամ տանում, թողում էր մոր տունը: Խեղճ մերը խաթրից չէր ըլնում, պահում էր:

Շատ անգամ Բալագյոզը կնգան ասում էր.—Ա՛յ Ալագյոզ, մեր էրեխեքը թո մեր տանը մնան:

—Բալագյո՛զ, արևիդ մատաղ, ես ուզում եմ, որ ես ու դու քանի ջահել ենք, մե տեղ ըլնենք, սեր վայելենք: Մերս չի մեռնի, կըպահա:

—Դու գիդաս, հըմա լավ չի, որ էրեխեքը հոր ու մոր ձեռի տակ չըմեծանան:

—Մերս, որ մե օր չի տենում, գժվում ա էրեխեքի համար, էնքան ա սիրում:

Դու մի ասա, Ալագյոզը սիրեկան ուներ, մարթը չէր իմանում: Էրեխեքը մոր մոտ էր թողում, մարթին քնացնում էր, ինքն էթում էր սիրեկանի մոտը:

Բալագյոզը հրկու ձի ուներ: Զիանքի գարին պակաս չէր անում, բայց էլի ձիանքը ջանի չին գալում, առող սատկում են: Սիրտը կասկած ընկավ. «Մշակը ձիանքի գարին ծախում ա, փող ա անում, դնում ա ջեբը»:

Մե օր էլ մշակին ասավ.—Ամրասլա՛ն քեօի, ես քեզի հարգում եմ, ոնց որ իմ օղորմածիկ հորը, հմա տենում եմ, որ դուզը մարդ չես, առ քո հախը գնա՛, ես ուրիշ մշակ կըբռնեմ: Ի՞նչ վատություն եմ արե, խաղե՛ին ջան, ես ուրիշ մշակ կըբռնեմ: Ես քո հոր նոքարն ի, մե օր մե թթու խոսք չըլսացի, հիմի ի՞նչ պատահավ: Մեղքս ասա՛, էթամ դեղ ուտեմ, մեռնեմ:

—Մեղքդ էն ա, որ ձիանքի գարին գողանում, ծախում ես, ձիանքը առող սատկում են: Բա ամոթ չի՞, էդ քո հասակին լայեղ բան ա, որ դու անում ես:

—Լա՛վ, խաղե՛ին, խնթրում եմ, 2-3 օր չըհեռացնես, հետո քո գործն ա, ինչ կուզես, արա՛:

—Ուզում ես էդ 2-3 օրը մե վնա՞ս տաս, հետո՞ էթաս:

—Ձէ՛, խաղե՛ին, գործ կա, կըպարզվի, կէթամ:

—Ի՞նչ գործ պտի պարզես:

—Ուաղե՛ին, համփերությունը լավ բան ա, ես քո հոր թայը մարդ եմ, հրկու օր ընձի լսա՛:

—Ասա՛, լսում եմ:

—Հիրկունը որ կէթաս քնելու, չըքնես: Կըձևացնես, որ քնուկ ես: Կնիկդ կըգա, անգաճդ քնի ուլինգ կըգցա: Հենց օթաղից դուս գա, դու շո՛ւռ արի մեկէլ կողիդ, ուլինգը հան քցա՛ ջեբդ, դո՛ւս արի բալկոնը, շուշից հեռո՛ւ կայնի ու թամաչա՛ արա: Ինչ որ կըտենաս, ձեն չանես: Լուսուղեմ, որ ձիանքի ոտի ձենը լսաս, գնա չորերդ հա՛ն, պարկի՛ տեղի մեջը, ուլինգը քի՛ց անգաճդ:

—Լա՛վ, խոսք եմ տվե, կըլսամ:

Իրիկունը էս մարթը կնգանն ասավ.—Տեղս քցա՛, պարկեմ, էսօր չատ եմ աշխատե, բեզարած եմ:

Կնիկը ուրախ-ուրախ տեղը գցեց, մարթին պարկեցրեց:

Քիչ ետը էկավ, տեսավ մարթը քնած ա, ուլինգը գցեց անգաճը, էկած մշակին հրամայեց, որ ձիերը թամքեն: Մարթը էդ ժամանակ շուռ էկավ մեկէլ կողին, ուլինգը հանեց գցեց ջեբը, դուս էկավ բալկոնը: Շուշի հետևից տեսավ, որ իրա կնիկը ու մշակը հեծան ձիանքը, գնացին, ո՞ւր գնացին, մնաց զարմացած:

«Հէյ վա՛խ, —ասավ,—բա ես էլ մարդ եմ: Մարդն էդքան միամիտ ըլնի՞, ոնց որ ես եմ: Քանի տարի ա կնիկս էդ գործով ա պարապում, ես ուլինգը անգաճիս քնում եմ: Լա՛վ, տենանք ըստու

վերջը ի՞նչ ա ըլնելու»: Գիշերը քունը չըտարավ: Լուսուղեմ կնիկն ու մշակը էկան: Զիանքի ոտների ձենը լսալով, վազավ մտավ տեղը, ուլինգը գցեց անգաճը, պարկավ:

Կնիկն էկավ, բանից խաբար չի, չորերն հանեց, գնաց մարդի մոտը:

Ուլինգն անգաճից հանեց, կամացիկ թշներին զարկեց, ասավ.—Բալազյո՛ղ, հանգիստ քնում ես, չես ասում, որ կնիկ ունեմ, էթամ մոտը: Բա կնի՞կը գա մարդի մոտը, ախար մարդը պտի էթա կնգա մոտը:

Փաթաթվավ մարդին, սկսեց պաչպչել, կեղծավորություն անել: Մարդն էլ ասավ, որ էրեկ շատ աշխատելուց հոգնել ա, վրեն հալ չըկա:

—Վայ իմ աշկերը քոռանա, բա հընչի՞ չասեցիր, որ չարբաթ անեմ խմես, կարող ա քրտնպաղ ես հելե: Ըտու դեղը չարբաթն ա,—ասավ կնիկը:

—Ձէ՛, կնի՛կ, ո՛չ չաքարը կօգնա, ո՛չ էլ չարբաթը: Գլխացավ ունեմ, չունչա էլ կտրվում ա:

—Հազար անգամ ասեր եմ, մի՛ աշխատա, տանը նստի՛, գործը մշակը կանա: Չայ է՞լ չես խմի:

—Բան պետք չի, հո չըմեռա, թո լուսը բացվի, տենանք ինչ ենք անում,—ասավ Բալազյողը:

Կնիկը գիշերը չէր քնե: Քունը տարավ, քնավ: Բալազյողը չորերն հագավ: Դուս էկավ, գնաց գոմը, տեսավ ձիանքը քրտինքի մեջ կորեր են:

Մշակին տենալով ասավ.—Դե ասա՛, Աբդո՛ւլ ամի, ո՞ւր գնացիք:

—Գնացինք ամեն օրվա տեղը, ետ էկանք:

—Հետո՞, հետո՞, չո՛ւտ ասա:

—Հետո էլ համբերություն ունեցի, հեր օխնած: Սաղ գիշերը չեմ քնե, գլոխս բժժում ա, թող կես սհաթ աչքս կպցնեմ:

Բալազյողը դուս էկավ, գնաց տունը, Աբդուլը ձիերի առաջը գարի լցեց, պարկավ, քնավ: Բալազյողի գլխացավն ավելի ուժեղացավ: Անհամբերությունից էր, թե ջղայնությունից, ինքն էլ չէր իմանում: Հաստատ գիտեր, որ կնիկը սիրեկան ունի, հմա չէր իմանում, թե ով ա, ինչ մարդ ա:

Կեսօրին մշակը վեր կացավ, ձիանքի տակն ավլեց, նստավ: Էդ ժամանակ Բալազյողը ներս մտավ:

—Բարե՛, Ամրասլա՛ն քեռի: Ախր էլ համփերություն չըմնաց, դե մե բան ասա՛, է՛:

—Բանն էն ա, որ կնիկդ սիրեկան ունի, էն էլ ավագակապետ ա: Որ գործը ուսուլով չըտանես, ես էլ, դու էլ կորած ենք, էրկուսիս էլ կըմորթեն:

Պայմանավորվան՝ էգուց չի, մյուս օր գիշերը էթան:

—Էգուց չի, մյուս օր կնգատ ասա՛, որ գործով էթում ես այսինչ տեղը: Իրիկունը մթնով կըգաս, ձիանքը կըթամքեմ, իմ չորերը կըհաքնես, պատրաստ կըկայնես: Որ հեծավ ձին, դու քո ձիով հետևից գնա, ձեն չըհանես, առաջ չընկնես: Ինքը ուր էթա, հետևից գնա՛, կարող ա պատահի, որ տեղը փոխեն: Կնիկդ ինչ որ ասա, կատարա՛, ձեն չըհանես: Հենց որ խոսացիր, ճանանչան, քեզի կըսպանեն: Ամեն բան աչկովդ կըտեսնաս, հըմա ձեն չըհանես, կըգաս, հետո կըխոսանք:

Ամրասլանի ասածով արավ: Էդ օրը Ամրասլանը խազեինի կնգա ձին դաստու թարս էր թամքե:

Կնիկն էկավ, որ տեսավ մե բամփաչա տվեց մարդի գլխին ու հազար բան ասավ.—Տո շանորդի՛, տո քոփա՛կ, ոչ առաջին օրն ա, ոչ էլ դու իմ էչ մարդն ես, բա ձին թա՞րս են թամքում, որ դու թամքեր ես:

Բալագյոզը ձեն չարավ, թամքը ուղղեց: Գնացին: Կնիկն առաջ ա հընգե, ոնց ա քշում, քիչ ա մնում ձիանքը տրաքեն:

20–30 վերստ գնացին: Զիանքը փրփուրի մեջ կորեր են: Մե դուրան, կանանչ տեղ կայնան:

Բալագյոզը տեսավ խալիչեն փռուկ, բարձերը դրուկ, մե մարդ էլ նստուկ:

Կնիկը ձիանից իջավ, փաթըթվան իրար, մարդն ասավ.—Ուշացար, Ալագյո՛ղ, ինչքա՞ն սպասեմ:

—Ագի՛ղ ջան, սպասելը սերը չատացնում ա, ես ուզում եմ, որ դու գիշեր-ցերեկ սպասես:

Ավագակապետը ծծղաց, էկավ զանգուն բռնեց, Ալագյոզին գրկից իջեցրեց, դրեց խալու վրեն, մարդին ասավ, որ ձիանքը տանա, գյամը բռնած ման տա, քրտնուկ են, կըպաղեն:

Լուսուղեմ հելան, ձեն տվին, ձիանքը բերին, հեծան ու բաժանվան: Ճանապարհին Ալագյոզը մարդին ասավ, որ ուրբաթ օրը իրիկունը ձիանքը պատրաստ ըլնեն:

Մյուս օրը մարդը գոմից դուս չեկավ: Մշակի հետ շատ խոսացին, թե ինչ անեն:

—Ամիրասլա՛ն ամի, հիմի իմացա, թե ձիանքը հընչի՞ չեն ջանի գալում: Լա՛վ, որ էդքան էլ դիմանում են: Օրը քսան-քսանհինգ վերստ էթում են, էդքան էլ գալում, էլ ձի՞ կըգա ջանի, հըլա լավ ա, որ չեն սատկում: Գործը ոնց որ դու բացեր ես, էնենց էլ վեր-

Ջացրո՛ւ, քո խորհուրդը կըլսամ: Մե հնար մտածա՛, իրիկուն ա, ես էթամ կնգաս մոտ:

Դուռը որ բացեց, կնիկը վեր թռավ, վազավ առաջը, հրեխեքն էլ վազան:

Մարդը պատմեց, որ իրա քուրը շատ բարե ա հղրկե, լավ են, ինքն էլ լավ ա:

— Էրեխե՛ք, բա էսօր ո՞նց ա տատիկի մոտ չեք գնացել, — հարցրեց Բալագյոզը:

— Մայրիկը էկավ, բերեց, որ էսօր էստեղ մնանք:

— Լավ ա արե: Մայրիկին սիրո՞ւմ եք:

— Տատիկին ենք շատ սիրում:

— Կնի՛կ, տեղը գցա՛, պառկեմ, հոգնած եմ:

— Էս քանի օր ա հոգնած ես, քնում ես, կնիկ չունե՞ս, չըլնի՞ թե էլ լայեղ չես անում հետս խոսաս:

— Ա՛յ կնիկ, ի՞նչ ես ասում, չես ուզում, չեմ քնի:

— Լա՛վ, քնի՛, քնի դինջացի՛, ճամփա ես էկե:

Ուրբաթ օրը իրիկվանը կնիկն ասավ, որ էթում ա հոր տունը: Կըմնա հրեխեքի մոտը հզուց կըգա: Կնիկը գնաց: Մարդը մտավ գոմը՝ Ամրասլանի մոտ, ասաց, որ կնիկը գնաց հոր տունը, իրանք ի՞նչ անեն:

— Նազե՛ին, մութն ընկավ, կըգա: Իմ կարծիքն ա, հենց գա թե չէ, սպանենք, գցենք հորը, ծածկենք, վրեն էլ հողով, արմատներով փուչ տնկենք, ջրենք, իզը կորցունք: Դու կարդարանաս, կասես՝ հոր տանից ա կորե: Էսօր՝ հենց հիմի, մե մարդ վերցո՛ւ քո հետ, գնա՛/ աներանցդ տուն, քիչ խոսացեք էկեք: Հետո էդ մարդը կըդառնա քեզի վկա: Էդ մարդի մոտ կնգատ կըհարցուս, թե երփ ա գալու տուն: Բալագյոզը վերցուց մե հընգեր, մե նվեր զոնքաջին, գացին:

Նստան, խոսացին, էկավ էթալու ժամանակը, ասավ. — Ալագյո՛ղ ջան, չե՞ս հա էթանք:

— Ձէ՛, Բալագյո՛ղ ջան, հզուց կըգամ, էսօր մնամ հրեխեքիս մոտը:

— Դու գիդաս, ոնց որ քեֆդ ուզում ա:

Իրանք էկան, հընգերը գնաց հրանց տունը:

Մութն հընգավ թե չէ, կնիկն էկավ:

— Զիանքը պատրա՞ստ են, Ամիրասլա՛ն:

— Պատրաստ են, խա՛նըմ:

— Ես էլ պատրաստ եմ, — ասավ մարդը ու հետևի յանից բալթեն տվեց կնգա գլխին:

Կնգան տարան, գցին հորը, ծածկին, մե քանի փուչ էլ բահով քորահան արին, բերին տնկին վրեն, ջրին ու պարկան քնան:

Իրեք օր էր, ձեն չըկար: Իրեք օր ետը մարթը գնաց աներանց տունը: Աներանք, բանից խաբար չեն:

Ձոնքաջին ասավ.—Ա՛յ մեր, էս մեր Ալազյոզ աշնան դա՞րձ ա էկե, Հընչի՞ տուն չի գալում, թե՞ խոռվեր ա:

—Էդ ի՞նչ ես ասում, Բալազյո՞զ: Էն օրը, որ դու մեր տանից գնացիր, Հինքն էլ էկավ, ասում էր. «Էթամ մարդս մենակ ա, սիրտը նեղանում ա»:

—Ա՛յ մեր, ո՛չ հանաքի ժամանակ ա, ո՛չ էլ ձեռ առնելու, ասա՛, գա էթանք, տանը հազար գործ կա:

Էկավ աները: Աներն էլ ասավ, որ քո էկած օրը Ալազյոզը ետ դարձավ էկավ:

—Մարդ ու կնիկ խոսքներդ մեկ եք արել, ո՞ւր ա Ալազյոզը: Տունը անտեր ա մնացե:

Ձեն տվեց էրեխեքն էկան:

—Էրեխե՛ք, ո՞ւր ա ձեր մերը:

—Մայրիկն ասում էր՝ էթամ, հայրիկը մինակ ա, էկավ տուն:

Տանեցիք իրար խառնվան: Հերն ու էրեխեքը բանից խաբար չին, Հըմա մերն ու քենին լավ ին իմանում, թե ուր գնացած կըլինի:

—Էլ ման մի՛ էկեք, —ասավ զոքանջը, —ես ման կըզամ: Փեսա՛ ջան, սիրտդ չընեղանա, կնիկդ սիրեկան ունի, կարող ա գնացեր ա սիրեկանի մոտը, չեն թողում, որ գա: Ես ջուղաբ կանեմ, կըզա: Էրկու-իրեք օր սպասի՛:

—Ա՛յ մեր, էդ ի՞նչ ես խոսում: Իմ Ալազյոզի վրեն էդ տեսակ բան մի՛ ասա, սիրտս նեղանում ա:

—Դու ես, որ սիրեկան չունես, բալա՛, էնի ունի:

Մարդն սկսեց գլոխը տոփել, լալ:

—Մի՛ լաց, որ չէկավ, պստի քուրը քեզի կըտամ, Ալազյոզից բոյով էլ, սիրուն էլ, ջահել էլ: Թո էնի էթա դաչաղների մոտ աբրի: Գետինը մտնի էն անամոթը, որ էտենց բան ա անում:

—Դուք իմ Ալազյոզին գտեք, պստի քուրը պետքս չի: Ես չեմ հավատում էդ խոսքերին: Աչքովս էլ որ տեսամ, չեմ հավատա: Ալազյոզը քո ասած կնանիքից չի: Մե բան պատահեր ա, չեք ուզում ասել: Ասե՛ք, թե ինչ ա պատահե, բոլորիդ կըտամ, կըսպանեմ:

—Գնա՛ քո տունը, իրեք օր հետո Հըմեն բան կիմանաս, —ջղայնացած ասավ զոքանջը:

Բալազյոզն էկավ մշակի մոտը, իրանց խոսածներն ասավ: Ասավ, որ պստի քուրն են տալում:

—Պստի քուրը, խազե՛ին, մեծից ետ չի մնում: Էն էլ սիրեկան ունի, տենում եմ բախտդ չի բերում:

—Բա ի՞նչ անենք, Ամիրասլա՛ն:

—Մտածենք, էգուց խոսանք: Խելքս բան չի կղերում: Ես ավագակներից եմ վախենում, վայ թե մե օյին բերեն գլխներիս: Ավագակապետը թունդ ա սիրահարվե: Վրեժը կըլուծա: Մոտդ գենք պահա, խազե'ին: Գիշերը որ կանչեն, դուս չըգաս, ես պատասխան կըտամ:

Էս խոսալուց հետո խազեինը գնաց իրա օթաղը, Ամիրասլանը պարկավ թախտին: Գիշերվա կեսին ավագակներից մեկն էկավ, դուռը թխկցուց: Ամիրասլանը դուս էկավ: Ճանաչավ: Խոսացին: Ամիրասլանն ասավ, որ իրեք օր ա՝ կնիկը կորեր ա, մարդը գնացեր ա ման գալու, տանը չի: Ավագակը ետ գնաց:

Լուսը որ բացվավ, Ամիրասլանը պատմեց ավագակի հետ խոսածը ու հետո ասավ. —Ուղե'ին, շատ մտածեցի, թալի, բունի, վերջը էկա էն կարծիքին, որ դու պատի քուրծը պտի առնես: Թե որ նրան չառնես, ավագակներին կըմիանան, քեզի սպանել կըտան: Գնա ասա', որ ուզում ես, հըմա մե տարի թո հընցնի, գուցե կնիկս էրևում ա: Քվորը որ առնես, էլ թշնամություն չեն անի, մինչև էս գործը կըխախսանգվի: Էլի դու մնում ես սրանցը փեսա:

Բալագյոզը լսում էր Ամիրասլանի խորհուրդները ու կատարում: Ամեն օր էթում էր աների տունը, գալում: Քենու հետ էլ հարցը վերջացրեր էր: Ալագյոզի մասին էլ քիչին խոսում:

—Ով ա իմանում, ուր ա գացե, —ասում էր մերը:

Տարին որ լրացավ, քենուն տարավ իրա տունը: Էրեխեքը քենուն մայրիկ ին ասում: Քենին էս էրեխեքին մորից շատ էր պահե, շատ էլ սիրում էր:

Մե օր էլ մարդ ու կնիկ էրեխեքը վերցրին, գնացին մոտիկ դաշտը ման գալու: Օրը լավ օր էր, արև, տաք: Հըմա կեսօրից հետո հանկարծ ամպեց, չէր անցե կես սհաթ, սկսվավ կարկուտ ու անձրև: Մոտիկ մե զաղա կար, փախան մտան էդ զաղեն: Մութն ընկավ, անձրևը խշալով գալում էր: Զաղի առաջով ուժեղ սելավ էր էթում: Էլ զաղից դուս չէկան: Մեկ էլ տեսան՝ 8 ձիավոր էկան, ձիանքը հօրուկին, մտան զաղեն: Էս մարդը, կնիկն ու էրեխեքը քաշվան մե քունջը, ձենները կտրին: Տեսան, որ ավագակներն են: Ղաչաղները կրակ արին, ոչխար մորթին, տիկով գինի դրին, էրկուսը սկսին ոչխարը մորթել, բրթել, էփել: Մնացածը ավագակապետի հետ նստան, խոսում են օրվա իրանց հետ պատահածի մասին:

Ավագակապետն ասավ. —Տղե'րք, հաց ուտենք ու քնենք: Գիշերվա կեսին էթանք էն մարդին վերջ տանք, կնիկն էլ բերենք, Ալագյոզից հետո իմ աչկը քվոր վրեն ա: Էն շանորդին, ոնց կնգան սպանեց, քենուն առավ, վայելում ա: Մեր անունն ա դուս էկե, հըմա մեծ ավագակը քեֆ ա անում: Էսօր քեֆը կըհարամվի:

Ավագակապետը որ էսենց ասավ, էս կնիկը ու մարդը լսում ին: Իմացան, որ խոսքը իրանց մասին ա:

Կնիկը տեսավ ու լսաց, որ ավագակապետի աչկը իրա վրեն ա, ասավ.—Ձեր ուզած մարդն էլ էստեղ ա, կնիկն էլ: Դու դուզ ես ասում, ավագակապե՛տ, քվորս սպանեց, ընձի էլ զոռով տիրեց, կանաս՝ ազատա՛:

Ավագակները էս որ լսացին, խանչալները քաշին, հելան: Էս մարդին բռնին, կապին մե ցցից:

—Մի՛ սպանեք,—ասավ ավագակապետը,—Թո իրա աչկով մե քանի բան տեսա, հետո կըսականենք, գործներս հաջող ա, գելն իրա ոտով թալազն ա հընգե: Կաշին հանելը դժար չի:

Ավագակները սկսին քեֆը: Ուտում-խմում են: Կնգան ու էրե-խեքին էլ ուտելիք տվին: Էնքան խման, որ թուլցան, հընգան:

Որ հարբեցին, տեղն ու տեղը քնան, հերը տղին կամաց կանչեց մոտը, ասավ.—Մեկի խանչալը վերցո՛ւ, էս կապերս կտրա՛:

Տղեն կապերը կտրեց: Բալագյոզը ազատվավ, բոլորի զենքերը հավաքեց: Էկավ կնգա մոտը, տեսավ, որ կնիկն էլ ա հարբե, ավագակապետին գրկե ու պարկե: Ոճանչալը վերցուց, ութ ավագակին էլ, կնգան էլ սպանեց էրեխեքին էլ վերցուց, էկավ տունը, Ամիրասլանին պատմեց եղելությունը:

Ամիրասլանը խելոք խորհուրդ տվեց, ասավ.—Վեր կաց գնա՛, ոնց որ եղել ա, պրիստավին ասա՛: Պրիստավը քեզի չի բանտարկա:

Բալագյոզը ձին հեծավ, գնաց պրիստավի մոտ: Պրիստավը կանչեց ուրեղնիկին, ստրաժնիկներին, էս մարդը նորից պատմեց, ոնց որ հելեր էր:

Էդ ժամանակ պրիստավն ասավ.—Բալագյո՛զ, թե որ ուզում ես ազատ մնալ, դու ոչ մեկին մի՛ ասա, որ դու ես սպանե: Ես էդ բանը վերցում եմ իմ վրեն: Էդ ավագակները սաղ զավառը քանդեր են, զավառապետը զորք ա պահանջե: Գնանք ջանդակները բերենք, կասեմ, որ ես ու իմ ստրաժնիկներն ենք ավագակախումբը կոտորե: Ինչ վերաբերում ա քո կնգան, դու կասես, որ կնիկդ իրիկունը տանից գացե, ետ չի էկե: Մենք էլ կըհայտարարենք, որ կնիկը մուծը տեղը, պատահական ա սպանվե:

Էկան, օդի մեջ կրակին, հարայ-հրոց գցին, ժողովուրդ հավաքվավ, տեսան, որ պրիստավը, ուրեղնիկը, ստրաժնիկները ջանդակները քաշում են դուս: Գյուղացիներին հրամայեցին, էրկու սել բերին, ջանդակները բարձին, տարան չրջան: Պրիստավը զավառապետին զեկուցեց, որ ինքն ու ստրաժնիկները էս տեսակ քաջագործություն են կատարե:

Էկան, քննություն կատարին, գյուղացիներն էլ վկայեցին, որ իրանց աչկով են տեսել: Բալագյոզն էլ վկայեց, որ իրա կնիկը հրեկ-վանից գնացե, տուն չի էկե, կապ ուներ ավազակապետի հետ:

Էս տեսակությունով խեղճ մարդը շառից պրծավ: Պրիստավին ու ստրաժնիկներին գավառապետը ներկայացրեց պարզևատրման, գրեցին, որ էդ քաջերը մե ավազակախումբ են ոչնչացրե:

Երկնքից իրեք խնձոր ընկավ...

